

ԵՐԵՎԱՆԻ ՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԿԵ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мешакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտուն 10—2 ժամ
(շաբթի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առին լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Սպիտակի Խոշորերեսները, Եւգենի և Մուշեղ Բարսեղեանները ծանուցանում են
բարեկամներին և ծանօթներին, որ կիրակի, յունվարի 12-ին, տեղի կունենայ՝

ԱՒԵՏԻՔ ԽՕՀԱՄԻՐԵԱՆՑԻ

հոգեհանգիստը նրա թաղման տարեգրքին առիթով Թիֆլիսի Մոզնու. Գ. Գեորգ եկեղեցու
Պատարագը կը սկսվի ժամի 10¹/₂-ին, հոգեհանգիստը ճիշդ 12 ժամին:

1—1

Ներկայ յունվարի 12-ին, կիրակի, Թիֆլիսի Գողթալիսի Կրէդիտային ընկերութեան
Վարչութեան նախկին նախագահ՝

ԱՆՏՈՆ ՍՈԼՈՄՈՆՈՎԻՉ ԿՈՐԳԱՆՈՎԻ

մահվան տարեկիցին, Ջորջէնի եկեղեցում պատարագից յետոյ հոգեհանգիստ կը կա-
տարվի, որի մասին է՛ն կ'երո՞ւ թե՛ ան Վարչութիւնը տեղեկացնում է հանգու-
ցեալի յիշատակը պատուել ցանկացողներին:

Պատարագի սկիզբն է 10¹/₂ ժամին, իսկ հոգեհանգիստի ցերեկվայ 12 ժամին:

1—1

ԲՈՎԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Մի առաջարկութեան առիթով. — ՆԵՐՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հայոց ներկայացումները Կա-
նանց հարցը և մեր հոգեհանգիստը. Նախակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաղադրական աշխարհի վիճակը.
Արտաքին լուրեր. ՀԵՌԱՅԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՆ.
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՍԻՍՏԵՄ

ՄԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԱՌԻԹՈՎ

«Մշակի» երէկվայ համարում մենք հրա-
տարակցինք խմբագրութեան ուղարկված
մի նամակ, որի մէջ յայտնված է, որ Բեր-
լինում կազմվել է մի մասնաժողով իրա-
կանացնելու ներկայ 1903 թվի ամառը
Բերլինում մի հայկական ցուցահանդէս:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՍՏԵՄ

(Մառն Հալքե *)

— Տեսնում եք, ես ապրում եմ միայն հե-
տաքրքրութեան համար և ցանկանում եմ ի-
մանալ, թէ ապագայում ինչ պէտք է լինի ի
հարկէ երեսնամեակի համար էլ եմ... Հակա-
ռակ դէպքում, հատուցանում եմ ձեզ, եթէ
ես հէց այս րօպէին այստեղ ընկնէի և մեռ-
նէի, դրանից էլ լաւ բան չէր լինի. ես ձեռ-
նում եմ միայն հանգստութեան, բացարձակ
հանգստութեան, իսկ այդ բանին կարելի է
համեմատել միայն այնտեղ... այն աշխարհում
Դրանում բոլորովին համոզված եմ. Այն, ես
այդ դեռեմ Զէք չեմ տեսնում ինձ:

— Օհ, անկասկած, պարոն Հայրն ես ինքս...
ես ձեզ հետ բոլորովին համաձայն եմ և հա-
մոզված այդ բանի մէջ. Դուք, ի հարկէ, ի-
մանում եք...

— Այն, ես այդ իմանում եմ. Փորձն ինձ
արդէն ցոյց է տուել. Բացի դրանից... ես չեմ
ցանկանում ոչ մի բանի մասին մտածել. Միակ
բանը, որ դեռ ինձ պահպանում է, այդ այն
է, որ այնտեղ, այն աշխարհում ոչ մի բանի
մասին այլ ես չը պէտք է մտածել. Եթէ ոչ,
սարսափելի կը լինէր մի անգամ էլ... բայց
այդ բանը չի լինի. Ապագան ինձ միշտ
հետաքրքրում է. Մի խօսքով հետաքրքրու-
թիւն և միմիայն հետաքրքրութիւն:

Պարոն Հայրն սովորական ձայնով էր խօ-
սում և նրա մեղմ ձայնը դողում էր. Մենք

Այդ ցուցահանդէսում պէտք է հանդէս
գրվեն թէ երկրի բերքեր և թէ արհես-
տագործութեան ու մտաւոր աշխատանքի
արդիւնքներ:

Մենք միշտ համակրութեամբ ենք վե-
րաբերվել ամեն մի ձեռնարկութեան, որ
նպատակ է ունեցել ծանօթացնելու օ-
տարներին մեր երկրի և նրա արդիւնք-
ների հետ: Նոյն վերաբերմունքը ունենք
և ներկայ դէպքում. բայց կարեւոր ենք
համարում ասել մի քանի խօսք՝ պարզելու
և որոշելու գործի էությունը:

Հայերը ապրում են Կովկասում, Փոքր-
Ասիայում և Պարսկաստանում: Նրանք,
ձիշդ է, պահպանել են որոշ առանձնա-
յատկութիւններ և ազգագրական դճեր,
որոնք սեփական են միայն այդ տարրին,

քայլում էինք միջոցներով մէջ. Նա իր այժ
ձեռքով ձեռնափայտը բարձրացնում և զար-
կում էր փողոցի քարերին և մի տեսակ մեղմ
մետաղային ձայն էր առաջացնում: Մենք բա-
ւական երկար ժամանակ լուծելու էինք պահ-
պանում:

Մի ինչ որ ներքին ձայն ակնհայտ չէր
էր մարդկութեան տանջանքների և աննպատակ
գոյութեան մասին, իսկ ձեռնափայտի մետա-
ղային ձայնը և մեր քայլերի աղմուկը իմ
մտքերին հետ ներգաշխարհութիւն էին պահա-
նում: Ես կողմնակի կերպով նայեցի ուղեկցին
վրա. Նրա կարծիքով կեանքն անմիտ և անօ-
գուտ բան էր և այդ կարծիքը նրա համար մի
անվիճելի, հասկանալի, անհրաժեշտ և բնական
ճշմարտութիւն էր. Նա կեանքի մասին իր կազ-
մած հասկացողութիւնն արտայայտում էր հա-
տուկաբար Փրագմէտով, ձիշդ այն յոյնած մար-
դու նման, որ ամեն բանի անտարբերութեամբ
է վերաբերվում:

Բայց ես... ես կեանքից դեռ շատ բան էի
սպասում: Կեանքն ինձ համար դեռ ժպտում
էր. ես ինձ դեռ թարմ և երիտասարդ էի հա-
մարում ուղեկցին հետ համեմատած, որին
կեանքն արդէն զգուցեցրել էր, չը նայելով որ
նրա երեսուն տարին հազիւ եր լրացել:

Մի ինչ որ զգացմունք սկսեց ինձ ճնշել...
Փողոցների լապտերները աղօտ լուսաւորում
էին լամպով, զոյգ-զոյգ և մենակ անցողքով
անող մարդկանց դէմքերը: Մեր կողքով անցաւ
մարդկանցով լցված ձիաքարշը. Ամեն տեղ խօ-
սում ու ծիծաղում էին: Բայց մենք դեռ քայ-
լում և լուռ էինք:

Աշխարհային ունայնութիւնը ինձ վրա ճնշող
ուղաւորութիւն էր թողնում և մի ներքին
ձայն ասում էր ինձ. «Բնիկը քեզ համար խորթ
է այդ մարդկանց ուրախութիւնը. ինչու դու
կեանքի քաղցրութեան համար չես ճաչակում և
բաղդաւորութեան րօպէներով զուարճանում:
Ի՞նչ ես ցանկանում դու և ի՞նչ փնտռում»:

բայց շատ տեղերում նրանք ապրում են
խառն ուրիշ ազգագրական տարրերի հետ
և մի շարք երևայթների մէջ չեն տար-
բերվում շրջապատողներին: Երկրի բերքը
և հարստութիւնը չէ գտնվում միայն մի
ազգագրական տարրի, այլ բոլորի ձեռքին:
Տնտեսական և քաղաքացիական փոփոխու-
թիւնները, որոնք առաջ են եկել անցեալ
դարերի ընթացքում, տարածել են ի-
րանց ազդեցութիւնները միաժամանակ բո-
լոր այն ազգութիւնների վրա, որոնք ապ-
րում են վերեւ յիշած երկրներում: Ուս-
տի անկարելի է և նպատակայարար էլ
չէ բաժանել երկրի հանքերը, մետաղները,
նաւթը, գինին, բուրդը և այլ բերքերը
ըստ ազգութիւնների: Անկասկած, բոլորո-
վին հնարաւոր է ժողովել ազգագրական
յատուկ կուլտուրայի հետքեր հին և նոր
գրականութեան, հազուադէպ, բանաւոր ա-
ւանդութիւնների, սովորութիւնների, հին
և նոր գեղարուեստի զանազան ձևերի
մէջ: Բայց այդտեղ էլ պէտք է կարողա-
նալ տարբերել այն և, այն ազգութեան
վերաբերալ ազգագրական առանձնայատ-
կութիւնները համեմատական ուսումնա-
սիրութիւններով:

Մենք կարծում ենք, որ ցուցահանդէսի
աջողութեան համար կարեւոր էր կամ
սահմանափակել ցուցահանդէսի ծրագիրը
այնպիսի բաժիններով, որոնք որոշ ազգա-
գրական նշանակութիւն ունեն և կամ
գրական կերպով անուանել այն երկրին-
քը, որոնց արդիւնքները պէտք է հանդէս
բերվեն, օրինակ ամբողջ Անդրկովկասի,
Փոքր-Ասիայի և Պարսկաստանի: Այն ժա-
մանակ ցուցահանդէսի մասնաժողովը կա-
րող էր պաշտօնական դիմումներ անել և
այդ երկրների վարչութիւններին, աջակ-
ցութիւն խնդրելով նպաստելու ցուցահան-
դէսի աջողութեանը, կազմակերպելով տե-
ղական յանձնաժողովներ ցուցահանդէսի
համար իրեր հաւաքելու. նպատակով ձիշդ

կրճատագրի ատամներս, կուռելով ինձ ճնշող
ծանր մտքերի հետ:

Վերջապէս մենք հասանք մի բարձրաւա-
նակ, որտեղից երևում էր կարմիր, կանաչ,
կապույտ և սպիտակ լապտերներով շրջապա-
տած երկաթուղու ճանապարհը: Այդ անթիւ
լապտերները կրակի ծով էին ներկայացնում...
Երկաթուղու գնացքի ձայնը տարածվում էր
օդում: Մի խօսքով պողպատեայ թէյսերի վրա
կեանքն ետում էր:

Յանկարծ ուղեկիցս ընդհատեց իր լուռ-
թիւնը և սկսեց ինձ պատմել այն բազմաթիւ
միջոցների մասին, որոնց չնորհիւ նա պահ-
պանել է իր գոյութիւնը: Բացի դրանից նա
չնչեցեց այն խոշորագույն հանգամանքների մասին,
որոնք նրան մանկութիւնից ի վեր մինչև այժմ
հաղածել են:

Սկզբում նա շատ դանդաղ էր պատմում,
յետոյ արագ ու կենդանի, նրա մեղմ ձայնը
դողում էր և վկայում էր նրա ներքին յուզ-
մունքը և անասելի տանջանքը, որ պատճա-
ռում էին նրան իր արտառանգ խօսքերը:

— Տեսնում եք, բարեկամ, որ ես մանկու-
թիւնից ի վեր զանազան փորձերի եմ են-
թարկել: Սկզբում եմ մասին հոգ է տարել
հայրս, ուսուցիչս, իսկ յետոյ կանաչը... վեր-
ջին փորձը ամենից դաժան է եղել. Դիտելը,
քիչ էր մնում աստուածաբան դաժանի:

— Ի՞նչ աստուածաբան. Զէ կարող լինել
Դուք:

— Այն, ես... ես Դարմաշտողի գլխաւորապետին
էի սովորում: Հայրս, որ Հոլանդիայում օֆի-
ցէր էր, ցանկանում էր ինձ «գործունեայ
մարդ» և հետաքրքրութեան ներքին դարձնել
և դրանով ինքը փառաւոր անուն վաստակել:
Գուցէ նա ցանկանում էր ինձ պալատական
քարոզիչ դարձնել: Այն ժամանակ ես դեռ ջա-
նիլ էի և դժբաղդաբար առաջ չը գնացի: Ես
չէի կարողանում յունարէն լեզուն տիրապե-
տել և նրա բաների բերան անելուն ընտելա-

է, այն ժամանակ առաջ կը գային ազգա-
գրական խնդիրներ և ուրիշ տարրերի հա-
մար, բայց դրանով միայն կը ձոխանար
ցուցահանդէսը, դառնալով թէ հայի և
թէ նրան կից ապրող ժողովուրդների
կուլտուրական կեանքի մի ցուցահանդէս:
Մենք երկիւղ ենք կրում, որ ներկայ անո-
րոշ գրութիւնը չը խանգարէ ցուցահան-
դէսի աջողութեան, որ ցանկայի է, իրեւ
մի դիտական-ազգագրական փորձ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԵՆԸ

Վերջապէս յայտարարվեց, որ տիկին Սի-
րանոյշը յունվարից սկսած մասնակցելու է
հայոց դրամատիկական ընկերութեան ներկա-
յացումներին: Յունվարի 9-ին, հինգշաբթի,
նշանակված էր առաջին ներկայացումը այդ
տաղանդաւոր դերասանուհու մասնակցու-
թեամբ:

«Կանխագաղղ տիկին», կամ «Մարգարիտ
Գոտիէ» — ահա ինչ պիտի էր ընտրել տիկին
Սիրանոյշը իր առաջին ներկայացման համար:
Այլեքանց Դիտելի այդ նշանաւոր դրաման
վաղուց ծանօթ է հայ հասարակութեան և շատ
անգամ նա խաղացվել է հայոց բեմի վրա,
բայց, անտարակոյտ, տիկինը կանգ էր առել
այդ յաճախ խաղացված պիէտայի վրա այն
պատճառով, որ նրա մէջ հերոսուհու դերը
խաղացող դերասանուհին լայն ասպարէզ ունի
և հնարաւորութիւն ցոյց տալ իր բոլոր ձիւ-
քերը:

Եւ տիկին Սիրանոյշը, հայոց բեմի այժմեան
առաջնուհին, արգարև ցոյց տուեց իր աւելող
տաղանդը Մարգարիտ Գոտիէ դերի մէջ. Հո-
գեկան յուզմունքները, նրանց ելեկները, նը-
րանց քնքոյշ և բուռն արտայայտութիւնները
այնքան բնական էին դերասանուհու խաղի
մէջ, որ հասարակութիւնը մոռանում էր թէ
թատրօնում է գտնվում և տեսնում էր իր
նախ Այն, այն կանստները: Երբ ես քերակա-
նական կանստների մասին մտածում եմ Այդ
բանն ինձ համար անտանելի և դժուար էր
եւ յաճախ ընդհատումներ էի ունենում ուսու-
ցիչներին և հօրս հետ և վերջապէս բանն այն-
տեղ հասաւ, որ ես մի անգամ ապտակ տուե-
ցի ուսուցչին, որ ինձ համբերութիւնից ար-
դէն հանել էր:

Այն ժամանակ ես վեցերորդ դասարանում
էի: Դիմաւորայից փնտրեցին ինձ, որի հետե-
ւանքն այն եղաւ, որ ես վերջնականապէս
հրաժարվեցի աստուածաբան կամ պալատական
քարոզիչ դասնալու մտքից: Հօրս հետ սարսա-
փելի կերպով ընդհարվելուց յետոյ, ես պէտք
է օֆիցէր դառնայի: Այնուհետև մտայ զինուո-
րական նախապատրաստական դպրոցը, բայց
այնտեղից էլ բան դուրս չեկաւ: Ես սարսա-
փելի յամառ էի: Օֆիցէր դառնալու միտքը
ժպտում էր ինձ, որովհետեւ ես մինչև ուղեղիս
ոսկորներն իւնկէր էի: Ամբողջ օրը ձիւռ վրա,
տանից դուրս, այդ բանն ինձ մեծ բաւական-
ութիւն կը պատճառէր:

Ես ոչ մի ցանկութիւն չունէի սովորելու և
ստուծ էի այն ամենը, ինչ որ ինձ դիրքն էր
յիշեցնում: Ես ընդհանրապէս ձեռք դրեց չէի
ստանում և հէց դրա համար էլ չէի առաջագի-
րում: Այն, եթէ այդ ժամանակ ինձ մէկը մի
գործնական բան առէրեցի:

Այդ բոլոր դեռ քիչ էին հօրս համար: Նա
ցանկանում էր ինձ իր վերջին փորձին էլ են-
թարկել և դրա համար ինձ մտքեց շանտաժերի
զինուորական դպրոցը: Մինչև այժմ ինձ յայտնի
չէ, թէ նա դրանով ինչ էր ուզում: անել կամ
ինչ էր մտածում: Վերջապէս ես պէտք է ար-
քունական շտաբայտերի պաշտօն ձեռք բերէի:
Բայց այդ մտքին էլ չուտով վերջ տրվեց: Բա-
նից դուրս եկաւ, որ ինձ համար դժուար էր
չտարմայտելի պաշտօն ձեռք բերել: որովհետեւ
միայն օֆիցերին էին տալիս այդ պաշտօնը: Այդ
վերջին և անաջող փորձից յետոյ վերջապէս

*) Գերմանացի նշանաւոր դրամատուրգ, որ գլխա-
ւորապէս հուլակ ստացաւ իր «Jugend» (Երիտասար-
դութիւն) դրամայով:

առաջ մի իսկական տանջվող կնոջ, որ գիտէ խորապէս սիրել և տանջվելու եւ տաղանդաւոր իրաւի հետ միասին հայ բնութի վրա հնչում էր մի երաժշտական հայտնի լեզու, մեղմ, քաղցր-բանական, լսելիքը գգվող և փայլալույս:

Վարչութիւնը, տեսնելով որ հայ բուր-ժուղական, Սօցիալիկ հայ հարուստները, չեն կամենում գրաւել լոճանները, խելացիաբար դրել էր նրանց ուսանող կրթութեան տրամադրութեան տակ. մի և նոյն ժամանակ նա վնասում, հարց էր տալիս իրան. «վերջապէս, ինչ անենք, որ գրաւենք թատրոն հայ բուրժուազիան, Թիֆլիսի հայ հարուստները»:

Ոչինչ, կը պատասխանէինք մենք. թողէք մեռնենք իրանց մեռնելու: Ինչ էք պահանջում մի զատակարգից, որ հարկերնէր հազարներ է ծախսում մօզայի, զանազան զուարճութիւնների, պաճուճանքների վրա, իսկ լինալու է մի քանի բուրժի տալ իր մայրենի բնութի պահպանութեան համար: Թողէք նրանց և ձեր յոյսերը այլ տեղ որոնեցէք...

Բայց անցնենք ներկայացման Զորորդ գործողութեան մէջ տիկին Սիրանուշը ամբողջովին մտաւ իր դերի մէջ և սաստիկ յուզեց, շարժեց հասարակութիւնը. կարող էնք ասել, որ նոյն իսկ ուսաց հոգաւոր դերասանուհի Սալի-նան նրանից բարձր հմտութիւն ցոյց չէր տալիս Մարգարիտ Գոսթիի դերում: Այդ գործողութեան ամբողջութեան քիչ չը նպաստեց և Արէլանի խաղը Արման Դիւլալի դերում: Արէլան սկզբում բուսական ստան էր խաղում, կարճէք դժգոհ լինէր իրան տուած դերից, բայց չորրորդ գործողութեան մէջ այդ դերասանը նոյնպէս մտաւ իր դերի մէջ և նրա զգացում խաղը ահագին ծախաւարութիւններ առաջ բերեց, որոնց նա միանգամայն արժանի էր:

Շատ լաւ հասկացել և կատարում էր իր փորձիկ խաղը Պետրոսեանը ծերունի Դիւլալի դերում:

Մեզ մնում է ասել, որ այս յունկարից սկսած բէմիսօրի դերը կատարում է պ. Պետրոսեանը:

Վաղը, կիրակի, դերերը խաղալու է Սունդուկեանի «Պէպօ» կօմէդիան և Պէպօյի դերում առաջին անգամ հանդէս է գալու պ. Արէլան, իսկ երկուշաբթի ներկայացվելու է տիկին Սիրանուշի մասնակցութեամբ «Կեանքի արժէքը» պիէսան, թարգմանութիւն Ն. Դանչենկոյից:

Հ. Ա.

ես պէտք է գործնական մարդ դառնայի...

Ես այն ժամանակ տասնութնր տարեկան էի: Հետագայում ապրում էր մեր ազգական կալուածատէրը, որի մօտ ուղարկեցին ինձ: Իմ պարտականութիւնն էր հսկել նրա ծառայողների վրա, ուրեմն, ինչպէս տեսնում էր, ես պէտք է կառավարէի դեր կատարէի: Այդպիսով յանկարծ զիւղացի դարձայ:

Ազգականս բաւական լաւ մարդ էր, բայց ազատ ժամանակ չունենալու պատճառով ինձ վրա բոլորովին ուշադրութիւն չէր դարձնում: Մենք միմեանց պատահում կամ տեսնում էինք միայն ճաշի ժամանակ, այն էլ շատ սակաւ: Իսկապէս մենք միմեանց հետ ոչ մի յարաբերութիւն չունէինք, դրա համար էլ ես միայն ինձ էի յանձնված և հետաքրքիր ոչինչ չէի պարագրում: Ոչ չընկալաւոր մարդիկ էին ինձ հասկանում և ոչ էլ ես նրանց: Այնտեղ բացի ինձանից երկու ուրիշ ծառայողներ էլ կային, որոնց հետ էլ ես չը կարողացայ յարաբերել, որովհետեւ սարսափելի մարդ էի (դոնէ ինձ այդպէս էր թւում): Թէ ես ինչպէս էի այն ժամանակ նայում կեանքի վրա, այժմ ինքս էլ չեմ հաստատում...

Հէնց այդ ժամանակ ես ծանօթացայ ապագայ կնոջ հետ: Նա կալուածի տնտեսուհին էր և մենք ամեն օր միմեանց պատահում էինք: Նա ինձ համար միակ կենդանի արարածն էր, որ տանեկտեղ տարեկան էր, իսկ ես քսան տարեկան: Ինչպիսի ազգային հագուստ ունէր նա: Ես իսկապէս նրա հագուստի վրա էի սիրաշարվել: Ծիծաղում էք դուք:

—Օ՛հ, ես այդ բանը չատ լաւ եմ հասկանում և երևակայում և ուրախ եմ, որ դուք այդ բոլորը մի տեսակ անտարբեր տօնով էք պատմում: Կարճէք ձեզ հետ ոչինչ չէ պատահել, ինչպիսի, խնդրեմ, շարունակեցէք...

—Այո, ես էլ հէնց այն ժամանակ ամեն բանին անտարբեր էի վերաբերվում: Մենք արդէն նշանված էինք և ցանկանում էինք շուտով ամուսնանալ: Երբ ես ամուսնութեան մասին

ԿԱՆԱՆՑ ՀԱՐՑԸ ԵՒ ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ (Նամակ Գանձակից)

Կարելի է համարձակ ասել, որ այլ ևս չը կայ մի լուսաւոր երկիր, ուր կանանց հարցը հերթական դարձած չը լինէր, չը յարուցանէր բոլորն հետաքրքրութիւն մտածող հասարակութեան առաջ: Վերջին ժամանակներս երեւան եկան անթիւ յօդուածներ և աշխատութիւններ այդ հարցի վերաբերմամբ: Գեղեցիկ սեռի էմանսիպացիայի մասին գրում են թէ տղամարդիկ և թէ իրանք, կանայք: Տ. Յեր-րիկովայի «Մի քանի մտքեր կանանց կրթութեան և դաստիարակութեան մասին» յօդուածը, որտեղ նա խիստ զատապարտում է կանանց այժմեան կրթութեան և դաստիարակութեան սխառեմը, արժանացաւ ողջ հասարակութեան և կրիտիկայի ուշադրութեան:

Պարզի պարբերական թերթերից «Լիւմ» հրատարակեց մէկ կտոր պատկերով «Կնոջ ազատութիւնը» վերնագրով ահագին աշխատութիւն: Այդտեղ հեղինակը թէպէտ չէ յայտնում նոր մտքեր, բայց ամփոփելով այն բոլորը, ինչ որ ասված է զանազան ժամանակներ կանանց հարցի մասին, աշխատում է հաստատել, որ տղամարդիկ և կանայք հասարակ են և թէ հարկաւոր է շնորհել վերջիններս, բացի ուրիշ իրաւունքներից, նաև քաղաքական իրաւունքներ, որովհետեւ լուրջ հիմք չը կայ զրկել նրանց այդ իրաւունքներից:

Այսպէս, ընթերցող, կան բախտաւոր երկիրներ: Եւրօպայում, ուր կանանց էմանսիպացիան այնքան է առաջ ընթացել, որ վէճի անարկան դառել է միայն կանանց քաղաքական իրաւունքներ տալու կամ չը տալու հարցը:

Իսկ մեզ մօտ...

Մեր կղերականները դեռ հարց են բարձրացնում այն մասին, թէ արդեօք ունեն իրաւունք մեր օրիորդները, կազմելով տղամարդկանց հետ խառն երգեցիկ խումբ և, կանգնելով նրանց հետ միասին, երգել եկեղեցում:

Գանձակի հայ եկեղեցիներում երկար տարիներ բացակայում էր երգեցիկ խումբ: Այդ արիթմով ժողովուրդը միշտ տրտնւել էր յայտնում և ունէր իրաւունք յայտնելու: Վերջապէս անցեալ տարի ս. Յովհաննէս եկեղեցում երգելու խումբ պատրաստելու համար հրաւիրեցին պ. Կուրյանեանին, որը պատրաստեց այդ խումբը տղամարդկանցից: Մեր քաղաքի գեղեցիկ սեռը չուզեց յետ մնալ վերջիններից և 16-ի չափ օրիորդներ ցանկութեւն յայտնեցին մասնակցել այդ խմբում: Մի անգից աւելի պատրաստուի՞րն պ. Կուրյանեանի մօտ:

Յօրս գրեցի, դրանից մի անգին պատմութիւն դուրս եկաւ: Ես վճռեցի համարձակ կերպով դիմադրել ինձ սպառնացող արդեւքներին: Եթէ մէկն այն ժամանակ իմ ուշադրութիւնը դարձնէր, այն բանի վրա, որ իմ արած քայլս շատ յանդուգն էր և մենք ապրելու համար ոչինչ չը պէտք է ունենայինք, դուք բանը ուրիշ կերպ կարգադրէի: Բայց դուք Յօրս չեք ճանաչում: Ես խորհուրդ տալ կամ համոզել չը գիտէի, բացի անխաղաղութիւն և անէճծնելից:

Երևակայեցէք իմ և ապագայ կնոջ գրութիւնը: Մենք պէտք է զրկվէինք ժամանակութիւնից և հայտնաբերելու ու սպառնալիքները պիտի ենթարկվէինք: Այդ բոլոր բաներն ինձ վրա սարսափելի տպաւորութիւն էին թողնում, բայց այնուամենայնիւ ես աշխատում էի ստածս առաջ տանել: Շուտով իմ մէջ յղացաւ Ամերիկա գնալու միտքը և այն էլ պայծառ գոյներով: Կինս ինձ ան բոլորովին համաձայն էր և մենք շուտով ճանապարհեցինք: Ամերիկա, որտեղ և ամուսնացանք: Հայրս անիծեց ինձ և օրինական վաւերագրերով զրկեց ժամանակութիւնից: Ես այդ բոլոր բաներին անտարբեր կերպով վերաբերվեցի և Յօրս հետ յարաբերութիւնս վերջնականապէս կտրեցի:

—Եւ այդ վաւերագրերը մնում են մինչև այժմ, հարցրի ես:

—Ո՛չ, իմ վերադարձից յետոյ ոչինչացրին: Ամերիկայում ես ոչ թէ կորայ, այլ և մինչև անգամ փողով հայրենիք վերադարձայ: Իմ ունեցած ամբողջութիւնը Յօրս դուր եկաւ: Այդպիսի մարդկանց միայն ամբողջութիւն է կուրացնում և գրաւում: Այնուհետեւ մեր լարված յարաբերութիւնը լուացաւ և հայրս դուրս եկաւ ինձ գիտաւորելու: Բայց մենք միմեանց համար արդէն օտարացել էինք: Հօրս շատ քաջ յայտնի էր իմ կործանը իր մասին: Մէր դէպի մտքները այդ, իմ կործանը մի նախապաշարմունք էր ես հայրական սէր չեմ ընդունում, այլ միայն ճանաչում եմ ընդհանուր սէրը դէպի մարդը, դուք է և մայրական սէր էլ: Կարելի

Գեղեցիկների վերջերում առաջին անգամ երգեց այդ խումբը: Այդ բանը միայն ուրախութիւն կարող էր պատճառել և, իրաւ, շատերը հաւաքվեցին եկեղեցի առաջին անգամ լսելու այդ խմբի երգեցողութիւնը: Բայց, տարաբախտաբար, նորակազմ խառն խմբի այդ առաջին և դուրեք վերջին դերերը առիթ եղաւ թիւրիմացութեան: Սրբազանը թոյլ է տալիս օրիորդներին երգել և եկեղեցում առանձին խմբով, որքան իրանց սիրտը կուզէ, բայց նա զո՛ւ չէ այն բանից, որ նրանք թոյլ են տուել իրանց երգել պատանիների հետ միասին: Եւ, ինչպէս լուծւում ենք, էջօհանի և մեր հոգեւոր կառավարութեան մէջ ծագել է ամբողջ դրադրութիւն, որի նպատակն է լուծել այն դժուար հարցը, թէ կարող են ասուր գրող հիման վրա կանայք երգել եկեղեցում տղամարդկանց հետ միասին:

Արդեօք շուտ կը գայ, հոգեւոր հայրեր, այն ժամանակը, երբ դուք վերջ կը տաք նայել տղամարդկանց և կանանց վրա, որպէս զայլերի և ոչխարների և կը նայէք նրանց վրա, որպէս «մարդկանց»:

Ի. Խօջայանց

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մօզոկ, գեղեցիկները՝ 28-ին «Մշակի» 229 համարում Մօզոկից հաղորդած լուրեր, որ վերաբերում էր իմ և տեղիս Սոսիանոս եկեղեցու նորոգման մէջ թոյլ է տուել իրան չը յիշել վիճարարութեան իսկական պատճառը, որը կայանում է հետեւեալում: Որպէս թէ ես ինչպիսիք տօնի տէր հօր եկեղեցու դուրս կատարած թափօր թեմիս առաջնորդի չըլարեալանին ընդդէմ համարելու, ասել եմ եկեղեցու ժամկոչին, որ տէր-հայրը եկեղեցու դուրս թափօր կատարելու իրաւունք չունի: Վերջինս էլ յայտնել է տէր-հօրը, որ շատ անբաւական է մնացել ինձ ձանդից:

Ինձ այդ դրադրութիւնից ազատ պահելու համար, եկեղեցում ժամանացութիւնը աւարտելու, յետոյ, կանանցի ժամկոչին ջանաւորի առաջ և հարցրի վերոյիշեալ դրադրութեան մասին: Նա բացէ ի բաց մերժեց, ասելով, որ ինձանից այսպիսի բան չէ լսած:

Ահա բուն եղելութիւնը, որը առիթ եղաւ մեր վիճարարութեան:

Է... Ինձ համար մինչև այժմ դեռ պարզ չէ, չը լինի այդ զգացմունքն էլ անարդարութիւն է: Իսկ մնացած սէրը բոլորովին նախապաշարմունք է:

Այն, նախապաշարմունքը: Հէնց այդպիսի նախապաշարմունքներով էլ ես գնացի Ամերիկա: Դուք չեք կարող հաւատալ, թէ ես որքան տանձութիւնների ենթարկվեցի այդօրինակ նախապաշարմունքների շնորհիւ: Այժմ այդ բանն ինձ համար շատ պարզ է: Ես այն ժամանակ բոլորովին տոգորված էին նախապաշարմունքներով: Երբ ես նորից մտածում եմ զիւրով անցածների մասին, զարմանում եմ, որ մինչև այժմ չեմ խորտակվել: Բայց թող խոստովանեմ լինի, երկու անգամ քիչ էր մնում խորտակվել:

Սկզբում ես մի սափրիչանոց բաց արիւ Երևակայեցէք օտար քաղաքում սափրիչանոց: Մենք վերջնականապէս հաստատվեցինք Նիւ-Եօքընում: Ոչ ես և ոչ էլ կինս անդիլերէն չը գիտէինք: Հայրս օրալսացել էր ինձանից բաւականով և դրա համար ինձ հինգ հարիւր դրոշար ճանապարհածախս էր տուել: Ի հարկէ, այդ փողը ծախսեցինք: Երեք ամիս անցնելուց յետոյ մեզ մօտ ոչ մի գրօջ էլ չը մնաց և հետեւաբար մեր գրութիւնը անտանելի դարձաւ: Սկզբում մենք դեռ եւրօպացիներ էինք, իսկ յետոյ... յետոյ...

Ուղեկիցս իր կրծքի խորին անկիւնից հառաչեց: Մենք մի քանի րօպէ լուռ մնացինք, բայց յետոյ ուղեկիցս էլի իր մեղմ ձայնով մեր յոռութիւնը ընդամենուց և շարունակեց:

—Ես արդէն գիտեմ, թէ ինչ է նշանակում պրօքստար և արդէն փորձել էի, որ աշխարհում ամեն ինչ հետզհետեւ կերպարանափոխվում է: Երբ ես երեկոները աշխատեցուց յետոյ տուն էի վերադառնում, կինս ամենից առաջ սեղանը ծածկում էր մաքուր սփռուցով և նրա վրա շարում էր մաքուր սփռուց, դառնակներ և պատասխանալիքներ: Մեզ մօտ ամեն ինչ պէտք է կանոնաւոր լինէր, հակառակ

Ես կարիք չեմ զգում պաշտպանելու ինձ տէր-հօր «մի քանի վատ առանձնայատկութիւններ» անխաղաղ դէպք, քանի որ երրորդ տարին գտնվելով Մօզոկում, ինձ ճանաչող հասարակութիւնից անբաւականութեան ոչ մի ցոյց չեմ նկատած:

Տիգրան Աւագեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի նահանգի I չըլանի ժողովրդական ուսումնարանների տեսուչը հինգշաբթի, յունվարի 9-ին, տեղեկացրեց Թիֆլիսի քաղաքային վարչութեան, որ Մոզոկ ս. Գէորգ եկեղեցու դատարար Սոսիանոսի չինութեան պատերի մէջ առաջացել են ձեղքուածքներ: Ժողովրդական ուսումնարանների տեսուչը նրա հետ միասին խնդրում է ուղարկային ուղարկել յիշված ուսումնարանը մի քաղաքային տեխնիկ որոշելու թէ որ աստիճանի վտանգւտուր են ձեղքուածքները:

Սօսիանոսի լրագրիւնների խմբագրութիւնները մօտ օրերումս ստացան ողջաբոլորի քաղաքային ընկերութիւնից տեղեկութիւն, որ այդ ընկերութիւնը հրաժարվում է նախաձեռնութիւն յանձն առնելուց՝ ուսումնական մասնաւոր գոյութեան 200-ամիսյ յօրեկանը տօնելու հարցում: Ընկերութիւնը իր հրաժարումը պատճառաբանում է նրանով, որ իր ուղարկած 700 հրաւերներին պատասխանել են միայն 7 խմբագրութիւններ:

Կովկասեան դինուորական չըլանի բոլոր նահանգներում և չըլաններում ներկայ տարվայ ընթացքում պէտք է կատարվի ձիերի ցուցակագրութիւն և դրա հետ միասին Թիֆլիսի, Դուլիթի և Թիֆլիթի գաւառներում ցուցակագրութիւն սալելի և լծելու պարագաների ծուղակագրութիւնը կը սկսվի փետրվարի 1-ից և կը շարունակվի մինչև ապրիլի 30-ը:

Յունվարի 8-ին կայացաւ քաղաքային վարչութեան, դպրոցական կօմիտէի անդամների, ձայնաւոր-իրաւաբանների և յատկապէս հրաւիրված Պ. Ա. Գալանթեանի, Ս. Ա. Մէլքե-Աղամօլի, Ս. Վ. Չէլալիէի միացեալ նիստը: Այդ նիստում առաջարկված էր այն հարցը, թէ որքան օրինական է Թիֆլիսի քաղաքային դպրոցական կօմիտէի գոյությունը: Երկուր վիճարարութիւններից յետոյ ժողովը ձայն էր մեծամասնութեամբ վճռեց առաջարկել այդ հարցը դուրսի քննութեանը:

Դէպքում մենք մեզ վատ էինք զգում: Բայց սպիտակ սփռուց շուտով փոխվեց կիթօնկայի, իսկ յետոյ նա էլ անհետացաւ: Այնուհետեւ մենք ճաշում էինք մերկ սեղանի վրա մի ամանից և ես ազահութեամբ զգում էի գգալս նրա մէջ: Երբ մարդս ամբողջ օրը աշխատում է, նա ամենայն հեշտութեամբ մոռանում է զանազան տեսակ ձևականութիւնները և ամեն բանի անտարբերութեամբ է վերաբերվում, միայն թէ կշտանայ: Այն, կշտանայ...

Կշտանալուց յետոյ ես գնում էի հարեան սեղանակը և այնտեղի մահճակալի վրա պառկում: Երբեմն էլ ծխում և գերմանական լրագիր էի կարդում:

Բայց շուտով այդ էլ վերջացաւ: Հէնց որ ես պառկում, իսկոյն քնում էի մինչև առաւօտ և այդ բանը ինձ հետ ամեն օր էր պատահում:

Ես հէնց այն ժամանակ հասկացայ, թէ ինչ է նշանակում կեանքը: Մի բան հասկանալու համար հարկաւոր է ամենից առաջ փորձել... Ոչ մի յոյս չունէի, որ կեանքս մի քիչ կարող է փոխվել: Բայց միշտ էլ աղքատ մնալ, այդ միտքն ինձ վրա սարսափ էր ազդում...

—Այն, սարսափելի է, հաստատեցի ես, բայց յետոյ ինչով էիք զբաղվում դուք:

—Սկզբում ես յատակներ էի սրբում, բայց շատ ջնջին փող էի ստանում, որովհետեւ յատակներ սրբողներին շատ վատ էին վարձատրում: Ինչ էր մնում ինձ այլ ևս անել: Ուրիշ բան էլ չէի կարող անել: Յատակ սրբելու համար ոչ մի ընդունակութիւն չէր հարկաւոր: Ես ինձ բաղաւորում էի համարում, որ գոնէ ինձ ամբողջ այդ զբաղմունքը: Չէ՞ որ ես մի անգործնական մարդ էի... Ինձ համար սարսափելի ծանր էր: Երևակայեցէք և լեզու չիմանալս: Այդ բոլոր պարագաները ինձ սաստիկ խանգարում էին: Դրանք իմ ստացած կրթութեան պտուղներն էին: Մակայն հետզհետեւ սկսեց ամեն ինչ փոխվել:

(Կը շարունակվի)

